ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ցավով և ափսոսանքով լսեցինք հայտնի գրականագետ և վաստակյալ մանկավարժ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Մկրտչյանի անսպասելի մահվան լուրը: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության Մեր անկեղծ վշտակցությունն ենք բերում հանգուցյալի բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Կյանքով ու գործունեությամբ հոգելույս հանգուցյալը եղավ ջատագովը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության զորացման, որի արտահայտություններից էր նաև իր նախանձախնդրությունն ու նվիրումը Սլավոնական համալսարանի ռեկտորի պաշտոնում: Գիտնականի իր հարուստ փորձառությունը, գիտելիքներն ու կարողությունները Լևոն Մկրտչյանը տարիներ շարունակ սիրով ու նվիրումով փոխանցել է իր ուսանողներին՝ նրանց հոգիներում միաժամանակ զորացնելով հայրենասիրության ու ազգասիրության ոգին:

Մեր աղոթքն է, որ Ողորմած Աստված երկնային Իր բարձունքներում խաղաղության մեջ ընդունի հանգուցյալ Լևոն Մկրտչյանի հոգին և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն պարգևի նրա սգակիր հարազատներին:

Խունկ, մշտառաք աղոթք և օրհնություն ննջեցյալի անանց հիշատակին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
23 օգոստոսի 2001 թ.